ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետությունում ռուսաստանյան ռազմակայանի տարածքից դուրս ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողների կողմից զենք կիրառելու մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանյան Դաշնությունը, հետագայում անվանվելով Կողմեր,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995թ. մարտի 16-ի պայմանագրի դրույթներով,

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողների կողմից ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի տարածքից դուրս զենք կիրառելու կարգի սահմանման անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հ Ո Դ Վ Ա Ծ 1

Սույն արձանագրության նպատակների համար ստորև նշված տերմինները նշանակում են.

1.«Ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողներ» - Ռուսաստանյան Դաշնության Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանում ծառայությունը անցնող զինծառայողները, ինչպես նաև Ռուսաստանյան կողմից ռուսաստանյան ռազմակայան գործուղվածները:

2.«Զենք» - զբաղեցրած հաստիքային պաշտոնին համապատասխան զինվորական ծառայության պարտականություններր կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողներին ամրացված հրազեն:

3.«Ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետ» - շարժական և անշարժ գույքով տեղանքի Կողմերի համաձայնեցված, տարածականորեն սահմանափակված և նշագրված տեղամաս, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի ստորաբաժանումների, զորամասերի, ձեռնարկությունների, հիմնարկների և այլ կազմավորումների տեղաբաշխման համար:

Սույն համաձայնագրով ընդունված են Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև Հայաստանի Հանրապետության

տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995թ. մարտի 16-ի պայմանագրի 1-ին հոդվածում բովանդակվող սահմանումները:

Հ Ո Դ Վ Ա Ծ 2

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողներին ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի տարածքներից դուրս զինծառայության պարտականություններ կատարելիս ռուսաստանյան ռազմակայանի կառավարող մարմնի որոշմամբ, որպես ծայրահեղ միջոց, կարող է տրվել զենք՝ այն պահելու, կրելու, ինչպես նաև կիրառելու հետևյալ նպատակներով.

-ռուսաստանյան ռազմական օբյեկտների, ինչպես նաև ռուսաստանյան զորամասերի և ստորաբաժանումների տեղակայումների, ռուսաստանյան զորամասերի շենքերի և կառույցների, ռուսաստանյան ռազմական շարասների, մեքենաների շարասյուների ու առանձին զինվորական տրանսպորտային միջոցների և պահակակետերի վրա հարձակումը հետ մղելու համար, եթե այլ եղանակներով կամ միջոցներով դրանք պաշտպանելու հնարավոր չէ,

-ռուսաստանյան ռազմակայանին պատկանող զենքին, ռազմական տեխնիկային և գույքին բռնի ուժով տիրանալու փորձերը կանխելու համար, եթե այլ եղանակներով դրանք պաշտպանելը հնարավոր չէ,

-ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց կամ այդ անձանց ընտանիքների անդամների պաշտպանության համար նրանց կյանքին կամ առողջությանը սպառնացող հարձակումից, եթե այլ եղանակներով և միջոցներով նրանց պաշտպանելը հնարավոր չէ:

Հ Ո Դ Վ Ա Ծ 3

Ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողները, որոնք մտնում են Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի տարածքներից դուրս մարտական խնդիրներ կատարող պահակախմբի կազմի մեջ, իրավունք ունեն զենք կիրառելու այն դեպքերում և կարգով, որոնք սահմանված են Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնադրությամբ:

Հ Ո Դ Վ Ա Ծ 4

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների անձնական անվտանգության համար սպառնալիքների ստեղծման դեպքում ռուսաստանյան ռազմակայանի կառավարող մարմնի՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների հետ նախնական համաձայնեցվածությամբ կարող է ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողներին տրվել զենք՝ կրելու, պահելու և արտաժամային ժամերին Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի տարածքից դուրս

կիրառելու իրավունքով ըստ սույն Համաձայնագրի 5-րդ կետով նախատեսված կարգի:

Հ Ո Դ Վ Ա Ծ 5

Ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի տարածքից դուրս զենքի գործադրմանը պետք է նախորդի այն կիրառելու մտադրության մասին նախազգուշացումը: Առանց նախազգուշացման զենքը կարող է կիրառվել հանկարծակի կամ զինված հարձակման, մարտական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, թռչող սարքերի կիրառմամբ հարձակման դեպքում:

Արգելվում է զենքի կիրառումը կանանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց կամ այդ անձանց ընտանիքների անդամների կյանքին սպառնացող զինված կամ խմբակային հարձակման դեպքում, եթե այլ եղանակներով և միջոցներով այդ հարձակման հետմղումը հնարավոր չէ:

Հ Ո Դ Վ Ա Ծ 6

Ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողները իրավունք ունեն զենք օգտագործել տագնապի կամ օգնության կանչի ազդանշան տալու համար:

Հ Ո Դ Վ Ա Ծ 7

Զենք կիրառելու և օգտագործելու դեպքերում՝ ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողը պարտավոր է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները շրջակայի քաղաքացիների անվտանգությունը ապահովելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում անհետաձգելի բուժական օգնություն ցույց տալ տուժածներին :

Ռուսաստանյան ռազմակայանի կառավարող մարմինը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողների կողմից ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի տարածքից դուրս զենքի կիրառման մասին:

Հ Ո Դ Վ Ա Ծ 8

Սույն համաձայնագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման պահից և ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի

Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995թ. մարտի 16-ի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Կատարված է Մոսկվայում 1997թ. օգոստոսի 29-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը ռուսերեն և հայերեն լեզուներով, ընդ որում՝ երկու տեքստն էլ համազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ